Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող Փոքր բիզնեսի (ինքնազբաղվածության) խթանման ծրագրի շրջանակներում շահառուներին գործարար խորհրդատվության և ուսուցման ծառայությունների մատուցման»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է մասնագիտացված Խորհրդատվական կազմակերպություն (այսուհետ՝ Խորհրդատու) վարձելու միջոցով իրականացնել ՍՊՎԾ-2-ի շրջանակներում նախատեսված Փոքր բիզնեսի խթանման ծրագրի շահառուների գործարար ծրագրեր մշակելու և իրականացնելու հմտությունների ուսուցումը և ֆինանսավորում ստացած գործարար ծրագրերի իրականացման համակողմանի ուղեկցումը:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

1) Մշակի և ԱՍՀՆ-ի համաձայնությանը ներկայացնի ՓԲԽԾ շահառուների ընտրության չափանիշները և մեթոդաբանությունը: Շահառուների ընտրության չափանիշները մշակելիս խորհրդատուն պետք է հիմնվի ՓԲԽԾ-ի Գործառնական ձեռնարկում սահմանված աշխատաշուկայում գործազուրկների անմրցունակության որոշարկման չափանիշների վրա:
2) Մշակի և պատվիրատուի հետ համաձայնեցնի ՓԲԽԾ շահառուներին գործարար ուսուցման մեկամսյա դասընթացի ծրագիր, որը պետք է ներառի՝
   - ուսուցման ենթակա թեմաների ցանկը, ժամաքանակը՝ 100-120 ժամ ծավալով (այդ թվում՝ առանձնացնելով տեսական և գործնական պարապմունքների համար նախատեսված ժամերը),
   - ՀՀ տարբեր մարզերում, տարածքներում ու համայնքներում գործարար ուսուցումների իրականացման ժամանակացույցը,
   - դասավանդվող յուրաքանչյուր առարկայի ուսումնական ծրագիրը և ակնկալվող արդյունքները,
   - ունկնդիրների ստացած գիտելիքների գնահատման մեթոդաբանությունը,
   - դասընթացի ունկնդիրների ստացած գիտելիքների գնահատման մեթոդաբանությունը:
3) Մշակի գործարար ծրագրի օրինակելի ձև (ներառյալ՝ գործարար ծրագրի պլան-ժամանակացույցի և բյուջեի ձևաչափերը), ինչպես նաև գործարար ծրագրերի ռեյտինգավորման (վարկանշավորման) ցուցանիշները և գնահատման մեթոդաբանությունը:
4) Սույն բաժնի 1-ին կետում նշված մեթոդաբանության հիման վրա և ԱՍՀՆ-ի հետ համաձայնեցված ժամկետներում շահառուների՝ ԶՏԿ-ներից ստացված նախնական ցուցակների և փաստաթղթերի հիման վրա կատարի յուրաքանչյուր տարածքից 14-ական շահառուի նախնական ընտրություն՝ վերջինների ցուցակները ներկայացնելով ԶՏԿ: Շահառուների նախնական ընտրություն կատարելիս՝ Խորհրդատուն ընտրվելիք

շահառուների համախմբում պետք է ապահովի կանանց առվազն 20 տոկոսի մասնակցություն:

5) Իրականացնի ՀՀ ԱՍՀՆ կողմից վերջնական ընտրություն անցած 700 գործազուրկների գործարար ուսուցման խմբային դասընթացները (մեկ խմբում ներգրավելով առավելագույնը 14 մասնակցի):

6) Մշակի գործարար ծրագրերի ուղեկցման մեթոդաբանություն՝ ներկայացնելով ՀՀ ԱՍՀՆ հաստատմանը:

7) Նախորդ կետում նշված մեթոդաբանության հիման վրա՝ մեկ տարի իրականացնի հավանության արժանացած և ֆինանսավորում ստացած 250 գործարար ծրագրերի իրականացման մասնագիտական ուղեկցումը:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

1. Գործարար խորհրդատվության ոլորտում (ուսուցանում, ուղղորդում) գործունեության առնվազն 5 տարվա փորձառություն,
2. գործարար ուսուցման դասընթացների իրականացման առնվազն երկու հաջողված փորձ (բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում ուսուցման ծրագրերի փորձը կդիտվի առավելություն),
3. ՀՀ աշխատաշուկայի, ինչպես նաև ինքնազբաղվածության, փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի հիմնախնդիրներին քաջածանոթ, գործարար խորհրդատվության փորձ ունեցող, բարձր որակավորման ուսուցանող մասնագետներ,
4. հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման առնվազն 3 տարվա փորձ,
5. հաշվապահական հաշվառման որակյալ մասնագետներ,
6. համապատասխան ուսուցման և խորհրդատվության ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներ կամ այդպիսի ռեսուրսներ ունեցող գործընկեր կազմակերպություններ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի Հուլիսի 06-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական հիմնարկի
գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am